

Որակի հոչակագիր **Տնտեսապես ակտիվ կազմակերպություններ**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Տնտեսապես ակտիվ կազմակերպություններ
0.2	Ոլորտը	Կազմակերպությունների ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին Բաժնի պետ Վարդան Արևշատյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 580 372, Էլ. փոստ՝ business_reg@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքման նպատակն է ունենալ արդիական տեղեկատվություն նրանց տնտեսական գործունեության տեսակների, ֆինանսական ցուցանիշների, գործած ամիսների և այլնի մասին:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են Արմստատի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները: Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների տվյալներ կիրառվում են Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների ընտրանքի կազմակերպման, ինչպես նաև տվյալների բազաների ֆինանսական ցուցանիշների ստուգաճշտման նպատակով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքման հիմնական աղբյուր է հանդիսանում պետական վիճակագրական տարեկան պարբերականությամբ բիզնես ռեգիստրի կողմից հավաքվող տեղեկությունները ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատակզմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալները:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողներ) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:

1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների մասին տվյալները պարունակում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունների տնտեսական գործունեության տեսակների, հասույթի, աշխատողների թվաքանակի, գործունեության իրականացման հասցեի և այլնի վերաբերյալ արդիական տեղեկատվություն:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Տնտեսապես ակտիվ կազմակերպությունները դրանք տնտեսական գործունեության որևէ տեսակ(ներ)ով գործունեություն ծավալող կազմակերպություններն են, որոնք գրանցված են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակզմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեում: Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների տվյալների բազայում ըստ կազմակերպչիրավական տեսակների հիմնականում առկա են բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներ, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, արտադրական կոոպերատիվներ:</p> <p>(ՀՀ քաղ. օրենսգիրք)</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Վարվում է ներքին օգտագործման համար:
2.3	Ճշտապահություն	Սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների տվյալների բազայի ձևավորման աղբյուրները լինում են ուղղակի և անուղղակի:</p> <p>Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների տվյալների բազայի ձևավորման ուղղակի աղբյուր են հանդիսանում վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից լրացվող բիզնես ռեգիստրի տարեկան հարցաթերթերը, ինչպես նաև Արմատատի կառուցվածքային ստորաբաժանումների տվյալների բազաները:</p> <p>Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների տվյալների բազայի</p>

		ձևավորման անուղղակի աղբյուր են հանդիսանում վարչական ռեգիստրներից ստացվող տեղեկությունները: (տես կետ 0.6) :
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից նախորդ տարվա վերաբերյալ ներկայացված տվյալների ճշգրտությունն (ընթացիկ գներով) իրականացվում է նախորդ տարի տվյալ ժամանակաշրջանի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը մինչև 2002թ. դասակարգվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 2003թ. կիրառվել է Հայաստանի դասակարգիչը համապատասխան (մշակված Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE-ի հիման վրա): Իսկ 2010թ.՝ ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև վարչական ռեգիստրների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Տվյալները չեն հրապարակվում
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են Տնտեսապես ակտիվ կազմակերպությունների համար. ա/ նույնականացման ծածկագիրը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ գործունեության իրականացման հիմնական վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ հաշվետու տարում իրականացված գործունեության տեսակները, ը/ թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված

		ծառայությունների և առևտրաշրջանառության ծավալը/հասույթը, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի թ/ աշխատողների միջին տարեկան թվաքանակը:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
5.4	Այլ տեղեկատվություն	Այլ տեղեկատվություն առկա չէ:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: